Ա Ռ Ա Ր Կ Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի ԹԻՎ 121-Ա-123-Ա ԵՎ 125-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 121-Ա որոշման դրույթներում համայնքի ղեկավարի պաշտոնը թերի է գրառված:

Թիվ 122-Ա որոշման նախաբանում «5-րդ ենթակետի» թվից և բառից հետո անհրաժեշտ է գրառել ««ա» և «բ» պարբերությունների» բառերը:

Թիվ 123-Ա որոշման 4-րդ կետը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթին, համաձայն որի՝ անհատական իրավական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին այն անձանց առձեռն կամ օրենքով սահմանված այլ կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, որոնց ուղղված է ակտը:

Թիվ 125-Ն որոշումը նորմատիվ բնույթի դրույթներ չի պարունակում, հետևաբար՝ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Ն» (նորմատիվ) տառով նշում կատարելու անհրաժեշտություն չկա:

Որոշման վերնագիրը չի համապատասխանում որոշման 2-րդ կետին: Որոշման դրույթների համարակալումը սխալ է կատարված: Բացի այդ, վերջին՝ 3-րդ կետում կատարված հղումն անհրաժեշտ է գրառել որոշման նախաբանում:

Որոշումների տեքստերի ներքևի մասերում տեղական ինքնակառավարման մարմինների անվանումները թերի են գրառված:

Կատարող՝ Նաիրա Մարտիրոսյան
28.07.2022թ.